ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Արջուտ համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91
34 , arjut.lori@mta.gov.am

N ԳԱ13
22 հունվար 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ավագանու 2018թվականի թիվ 01-Ա և 02-Ա որոշումները:

23.01.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. `

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունվարի 2018թվական, 01 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2.ՈՒժը կորցրած ճանաչել Արջուտ համայնքի ավագանու 2015թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Արջուտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 01-Ա որոշումը:

3.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ավագանու հաստատմանը ներկայացնել որոշումից բխող «Արջուտ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018թվականի փետրվարի 01-ից:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Տիգրան			
Դալլաքյան Վազգեն			
Խոյեցյան Հովհաննես			
Մկրտչյան Սաթենիկ			
Շահինյան Անդրանիկ			

Արջուտ համայնքի ղեկավար՝ Վ. Շ. Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2018թվական, 02 -Ա
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Սայադ Մնացականյան, համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

2.Սոնյա Նիկողոսյան, համայանքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ, հանձնաժողովի նախագահի տեղակալ

3.Աիդա Մկրտչյան, համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

4.Սաթենիկ Մկրտչյան, ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ /համաձայնությամբ/

5.Վազգեն Դալլաքյան, ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ /համաձայնությամբ/

6.Արտակ Մկրտչյան, համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ /համաձայնությամբ/

7.Մելանյա Ղուկասյան, համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ /համաձայնությամբ/:

2.Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7-օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Տիգրան			
Դալլաքյան Վազգեն			
Խոյեցյան Հովհաննես			
Մկրտչյան Սաթենիկ			
Շահինյան Անդրանիկ			

Արջուտ համայնքի ղեկավար Վ. Շ. Մկրտչյան